# ԱՐՄԵՆԵԱՆ ՀՈՂ Ա

*Գուսան Մեղրակ*

Երբ որ կործանուեց չքնաղ մեր Անին
Ենթարկուեցինք մենք օտարի լծին
Կորել էր հովիւը, փռուել էր հօտը,
Թուրքին էր մնացել հայոց արօտը:
Արմենեան հող ա, երկիրը ծով ա,
Սասուն, Մուշն ու Վանը հայկական հող ա:
Եղիր դու ամէն տեղ, որտեղ մի հայ կայ
Գուրգուրիր դու նրան, Հայաստան թող գայ:
Արմենեան հող ա, երկիրը ծով ա,
Սասուն, Մուշն ու Վանը հայկական հող ա:
Դժուար է, դժուար, ով երկիր ձգեակ
Որ հայը մնայ օտարի լծի տակ:
Արմենեան հող ա, երկիրը ծով ա,
Սասուն, Մուշն ու Վանը հայկական հող ա: